ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) արձանագրված դեպքերը և դրա տարածումը կանխարգելելու անհրաժեշտությունը,

հաշվի առնելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16 թիվ 298-Ն որոշմամբ 2020 թվականի մարտի 16-ից Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարված լինելու հանգամանքը, նույն որոշմամբ և պարետի որոշումներով սահմանված սահմանափակումները,

ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ և 106-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2018 թվականի հուլիսի 4-ի թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված՝ «Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգ»-ի 49-րդ կետի պահանջներով,

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության պայմաններում հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքային ռեժիմի վերաբերյալ կարգը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալին և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին՝ 2020 թվականի մարտի 27-ին հաստատել հավելվածում նշված հիմնական ցուցակը և իրազեկել հանրային պաշտպաններին:
3. Սահմանել, որ սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 27-ից և գործում է մինչև արտակարգ դրության ավարտը:
4. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն հրամանի մասին իրազեկել աշխատակազմին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

26 մարտի 2020թ.
ք.Երևան
թիվ 54-Լ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 26.03.2020թ.
թիվ 54-Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման գործողության ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) հանրային պաշտպանի գրասենյակի (**այսուհետ՝ Գրասենյակ**) հանրային պաշտպաններին թույլատրվում է, բացառությամբ՝ սույն կարգով սահմանված դեպքերի, աշխատել հեռավար կարգով (չներկայանալով աշխատավայր)՝ ապահովելով աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարումը:

2. Պալատի նախագահի տեղակալը հաստատում է Գրասենյակի ղեկավարի կողմից առաջարկած այն հանրային պաշտպանների ցանկը (**այսուհետ՝ Հիմնական ցանկ**), որոնք սույն կարգին համապատասխան որոշված հերթականությամբ աշխատանքը կատարելու են աշխատանքի վայրում կամ իրավաբանական օգնություն տրամադրելու վայրում՝ ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում: Հիմնականում ցանկում, որպես կանոն, չպետք է ընդգրկվեն 60-ից բարձր տարիք ունեցող, իրենց խնամքին երեք կամ ավելի երեխա ունեցող, շաքարային դիաբետ, սրտանոթային կամ շնչառական հիվանդություններ ունեցող հանրային պաշտպանները:

3. Գրասենյակի ղեկավարը՝ Հիմնական ցանկի, ինչպես նաև ոլորտը համակարգող Գրասենյակի ղեկավարի տեղակալի առաջարկության հիման վրա, հաստատում է հերթական աշխատանքային օրն աշխատավայր ներկայանալու պարտականություն ունեցող հանրային պաշտպանների կազմը (**այսուհետ՝ Կազմ**): Յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատավայր ներկայանալու պարտականություն ունեցող հանրային պաշտպանների կազմում ընդգրկվում են Երևան քաղաքի նստավայրի քրեաիրավական մասնագիտացման 3 (երեք) և քաղաքացիաիրավական մասնագիտացման 2 (երկու) հանրային պաշտպան, իսկ մարզի յուրաքանչյուր նստավայրում՝ մեկական հանրային պաշտպան՝ անկախ մասնագիտացումից: Կազմը սահմանվում է ըստ մարզերի, իսկ Երևան քաղաքում

նաև՝ ըստ մասնագիտացման: Կազմում ընդգրկված հանրային պաշտպանին իրազեկում է Գրասենյակի աշխատակազմը՝ առնվազն տվյալ աշխատանքային օրվան նախորդող օրը, բացառությամբ անհետաձգելի դեպքերի: **Կազմում չի կարող ընդգրկվել նոր կորոնավիրուսի վարակի առերևույթ ախտանիշներ (օրինակ՝ ջերմություն) ունեցող հանրային պաշտպանը:**

4. **Սույն կարգի 1-ին կետի թույլտվությունը չի տարածվում Կազմում ընդգրկված հանրային պաշտպանների նկատմամբ:** Մարզային նստավայրը սպասարկող հանրային պաշտպանը համարվում է Կազմի մեջ ներառված, եթե մարզային նստավայրն սպասարկում է մեկ հանրային պաշտպան:

5. Հանրային պաշտպանների **հերթապահությունը** սահմանում է Գրասենյակի ղեկավարը՝ Հիմնական ցանկի, ինչպես նաև ոլորտը համակարգող Գրասենյակի ղեկավարի տեղակալի առաջարկության հիման վրա:

6. Հանրային պաշտպաններին Կազմում կամ հերթապահության ընդգրկելու հարցը լուծվում է արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (ex aequo et bono):

7. Բացառիկ դեպքերում, շահառուին իրավաբանական օգնություն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, եթե հնարավոր չէ իրավաբանական օգնությունն արդյունավետ ապահովել Հիմնականում ցանկում ընդգրկված հանրային պաշտպանների միջոցով, թույլատրվում է իրավաբանական օգնությունը տրամադրել Հիմնական ցանկում չընդգրկված հանրային պաշտպանի միջոցով՝ տվյալ հանրային պաշտպանի համաձայնությամբ և առողջապահական պահանջները պահպանելու պայմանով:

8. Բոլոր հանրային պաշտպանները պարտավոր են՝

1) աշխատանքային օրերին և ժամերին հասանելի լինել Գրասենյակի համար՝ հեռավար կարգով աշխատանքները կատարելու նպատակով.
2) մշտապես ստուգել էլեկտրոնային փոստը և արագ արագանքել էլեկտրոնային փոստի միջոցով տրված հանձնարարականներին.
3) պատասխանել Գրասենյակի և շահառուների (վստահորդների) հեռախոսազանգերին, շահառուներին տրամադրել բանավոր և գրավոր խորհրդատվություն.
4) հանրային պաշտպանի գրասենյակում գործող էլեկտրոնային տեղեկատվական համակարգում մշտապես լրացնել անհրաժեշտ տվյալները.
5) ժամանակին կազմել անհրաժեշտ դատավարական և այլ փաստաթղթերը, դրանք սահմանված ժամկետում ուղարկել հասցեատերերին.
6) կատարել աշխատանքային պայմանագրով սահմանված մյուս պարտականությունները:

9. Գրասենյակի օժանդակ աշխատակազմի աշխատակցին հեռավար կարգով (աշխատավայր չներկայանալով) աշխատելու թույլտվությունը տրվում է վերջինիս վերադասի կողմից՝ Պալատի նախագահի համաձայնությամբ:

10. Գրասենյակի աշխատակազմը (այդ թվում՝ աշխատանքի վայրում գտնվող հանրային պաշտպանը) պարտավոր է աշխատավայրում պահպանել նոր

կորոնավիրուսի տարածման կանխարգելման վերաբերյալ առողջապահության նախարարության հրապարակած ցուցումները:

11. Գրասենյակի ղեկավարի փաստացի բացակայության դեպքում, Գրասենյակի ղեկավարի բոլոր լիազորություններն իրականացնում է Գրասենյակի ղեկավարի առաջին տեղակալը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Գրասենյակի ղեկավարի տեղակալը:

12. Սույն կարգով սահմանված հատուկ աշխատանքային ռեժիմը փաստացի սահմանվել է 2020 թվականի մարտի 16-ից: